Աղգիս Վեհափառ Ծերունազարդ Հայրապետն յայտնում է իւր շնորհակալութիւններն և օրհնում այն բոլոր անձանց և հաստատութիւններն, որոնք կատարել էին իրենց որդիական պարտիքն ու շտապել շնորհաւորել նորին Վեհափառութեան՝ Քրիստոսի հրաշալի Յարութիւնը։

**

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ ՀՅԱՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն վիճ. Կոնսիստորիային Երևանայ, որով պատուիրեցաւ առնուլ մուրհակ ի դանձապահէ Հոգ. Կառավարութեան Կարուց վասն վատնեալ գրամոց Աստենին և պարտաւոր կացուցանել զնա՝ յընթացս չորից ամաց վճարել զպարտիսն։ Թ. 226։

— Յանուն նոյն Կառավարութեան, որով լուծանելով զպսակ վերաբնակչուհւոյ ի Խաստուր գեղջ Մարգարտի Յարոյեան ընդ առն բոզոքական Վարդանայ Սհոյեան, թոյլատրի կնոջն յետ եռամսեայ ապաշխարանաց պսակիլ ընդ ապօրինի կենակցին իւրում, իսկ զայրն մերժելով յեկեղեցւոյ հայոց, արգելուլ նմա պսակիլ ընդ այլում։

— Յանուն Առաջնորդին հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ, որով պատուիրեցաւ կարգադրել տալ Տ. Մուշէ վարդապետին ի տարին 500 ռուբլի.— 300 յեկեղեցւոյն Ս. Պետերբուրգի և 200 յեկեղեցւոյն Մոսկվայի։ Թ. 234։

— Յանուն Նորին, որով արտօնեցաւ Սարգսի Գիւտեանց Ն. Նախիջեւանցւոյ և ամուսնոյ նորին թաղիլ ի գաւթի Ս. Աստուածածին եկեղեցւոյ քաղաքին, որք խոստանան բարեկարգել և նորոգել զարհեստագիտական դպրոցն տեղւոյն։ Թ. 235։

— Յանուն վիճ. Կոնսիստ. Բեսսարաբիոյ, որով պատուիրեցաւ կազմել ցուցակ ապօրինի կենակցաց թեմին և յղել այսր։ Թ. 236։

— Յանուն վիճ. Կոնսիստ. Արցախու ի նոյն միտս։ Թ. 239։

— Յանուն նոյն Կոնսիստ. որով պատուիրեցաւ վերադարձուցանել Ներսէս քհնյի. Բախտամեանց Դաշուշէն գեղջ զմուրհակ 170 ռուբլեաց և թոյլ տալ նմա քահանայագործել։ Թ. 240։

— Յանուն վիճ. Կոնսիստ. Շամախու, որով պատուիրեցաւ կազմել ցուցակ ապօրինի կենակցաց վիճ. և մատուցանել Նորին Վեհափառութեան։ Թ. 244։

— Յանուն Հոգ. Կառավարութեան Ն. Նախիջեւանի, որով պատուիրեցաւ ի նորոյ քննել զխնդիր վերաբնակչի քաղաքին՝ պարսկահպատակ Միքայէլի Պետրոսեան Բուդղանեանց, որ վասն լուծման պսակին ընդ կնոջն Յուստինեայ և զգործն մատուցանել Ն. Ս. Օծութեան։

— Յանուն տ. քհնյի. Խորասանճեան Օդեսայի, որով պատուիրեցաւ համոզել զնորեկացի Մուրատն Աւետիսեան ի բաց արձակել զապօրինի կինն, իսկ ի հակառակ դէպս կազմել արձանագրութիւն և յղել Ն. Ս. Օծութեան։ Թ. 246։

— Յանուն վիճ. Կոնսիստ. Աստրախանի, որով պատուիրեցաւ կազմել ցուցակ ապօրինի կենակցաց վիճակին և յղել Ն. Ս. Օծութեան։ Թ. 249։

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ կազմել օրագիր առ ի յանձնել վանահօրն Սանահնոյ վանուց Տ. Գարեգին եպս. ձեռնադրել զընծայացուն

Տիլիֆ գեղջ զԹավմաւն Տ. Բարդուղիմէոսեան ի քահա-նայ ժողովրդեան գեղջն։ Թ. 265։

— *Ցանուն վիճ. Ատենին Երեւանայ, որով պատուի-րեցաւ վասն ընտրութեան Տ. Գրիգոր ա. քահանայի Սուքիասեան՝ դադարեցուցանել զնա ի քահանայագործու-թենէ։ Թ. 284։*

— *Ցանուն Փոխ Թեմակալին Երեւանայ Տ. Կարապետ վարդապետի, որով պատուիրեցաւ Թոյլ տալ դադարե-ցուցեալ Գրիգորի ա. քհնյի. Սուքիասեան պաշտել զքա-հանայութիւն իւր ի տնական աւուրս՝ յետ խնդրելոյ նորա զներողութիւն ի Փոխանորդէն Հրապարակաւ։*

Բ.

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Առաջնորդին և ժողովրդեան հայոց Ամերիկայի, վասն յղեալ 9765 *րուբլի գումարին։ Թ.* 283։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՈՐՈՇՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մարտի 1-ին Սինոդը լսեց Աղէքսանդրապօլ քաղաքի ծխատէր կարգընկէց Մկրտիչ քհնյ. Գասպարեանցի խնդիրն ու Վեհափառ Հայրապետի մակագրութիւնը և որոշեց դի-մել Երեւանի տէր Նահանգապետին և հարց տալ, արդեօք մարմնաւոր իշխանութեան կողմից արգելք չկայ յիշեալին կրկին վերադարձնելու քահանայական կարգը։

Նոյն թուին Սինոդը լսեց Երեւանի Կոնսիստորիայի յայտարարութիւնը Ղարահամզալու գիւղի եկեղեցու չի-նութեան մասին և որոշեց ուղարկել Ղարահամզալու գիւղի ա. Աստուածածին եկեղեցու յատակագիծը տ. Կառավար-